

Ոչ պաշտոնական թարգմանություն

ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները հանձնման և ապաստանի հարցերին առնչվող ՀՀ օրենսդրական նորմերի լրամշակումների վերաբերյալ

Ներածություն

ՄԱԿ ՓԳՀ-ն իր մեկնաբանություններն է ներկայացնում՝ հանդես գալով որպես Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից լիազորված գործակալություն, որը պարտավորություն է կրում ապահովել փախստականների և իր լիազորությունների շրջանակներում ընդգրկված այլ անձանց միջազգային պաշտպանությունը, ինչպես նաև աջակցել կառավարություններին փախստականների հիմնախնդրին հարատև լուծումներ տալու հարցում: Կանոնադրությամբ սահմանված կարգով ՄԱԿ ՓԳՀ-ն իրացնում է միջազգային պաշտպանության իր մանդատը, ի թիվս այլոց՝ *«փախստականների պաշտպանությանն առնչվող միջազգային կոնվենցիաների կնքմանը և վավերացմանը նպաստելով, դրանց իրականացումը վերահսկելով և դրանցում փոփոխություններ կատարելու առաջարկներ ներկայացնելով»*: ՄԱԿ ՓԳՀ-ի կանոնադրությամբ սահմանված վերահսկիչ գործառնությունները վերահաստատված են Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի (1951 թվականի կոնվենցիա) 35-րդ հոդվածով, որի համաձայն Պայմանավորվող պետությունները պարտավորվում են համագործակցել *«Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակի [...] գործառնությունների իրականացման գործում, և, մասնավորապես, հեշտացնում են սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը վերահսկելու նրա պարտականությունը»*: Նույն պարտավորությունն ընդգրկված է Փախստականների կարգավիճակի մասին 1967 թվականի արձանագրության (1967 թվականի Արձանագրություն) 2-րդ հոդվածում:

Ընդհանուր դիտարկումներ

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է նախաձեռնված լրամշակումները, որոնք կոչված են ապահովել արդար, արդյունավետ և գործուն ընթացակարգեր, ինչպես նաև պետական միջոցների արդյունավետ օգտագործում՝ հանձնման և ապաստանի տրամադրման ընթացակարգերի համատեքստում: ՄԱԿ ՓԳՀ-ն լիահույս է, որ հետևյալ մեկնաբանություններն ու առաջարկությունները կծառայեն օրենսդրական բարեփոխումների գործընթացի շրջանակներում

իրազեկվածության ապահովմանը և կարող են հնարավորություն ստեղծել այդ լրամշակումների նախագծերի հետագա կատարելագործման համար:

Հատուկ դիտարկումներ

1. Լրամշակումներ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում

11-րդ հոդվածում առաջարկվող 4-րդ մասի վերաբերյալ

11-րդ հոդվածի ներկայիս ձևակերպումը նախատեսում է բացառող դրույթների սպառիչ ցանկ, որը հիմնված է լուրջ հանցագործությունների կամ հրեշավոր արարքների մեջ անձի ներգրավման վրա՝ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «գ» կետի համաձայն:

Ներկայիս ձևակերպմամբ՝ առաջարկվող 4-րդ մասը վերաբերում է կրկնակի դիմումներին, որոնք կարգավորվում են Փախստականների մասին օրենքի 59-րդ հոդվածով, այսպիսով, տպավորություն է ստեղծվում, որ այս կետի ընդգրկումը 11-րդ հոդվածում ավելորդ է:

Հետևաբար, ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է հեռացնել ներկայացվող լրացումը:

47-րդ հոդվածում առաջարկվող 2.1-րդ մասի վերաբերյալ

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է լրամշակումներում նշել ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակմամբ օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց իրենց հասկանալի լեզվով ապաստանի համար դիմելու իրավունքի մասին պատշաճ տեղեկացնելու համապատասխան պետական մարմինների, օրինակ՝ քրեակատարողական հիմնարկների, Գլխավոր դատախազության, դատարանների և համապատասխան այլ մարմինների վրա դրված հստակ պարտավորությունները, ինչպես նաև այն, որ դրան հաջորդող 15-օրյա ժամկետում տվյալ անձը կարող է ապաստան ստանալու մասին դիմում ներկայացնել: Այդուհանդերձ, կարող են ի հայտ գալ հանձնման ընթացակարգի շրջանակներում կալանավորված անձի վերահսկողությունից դուրս գտնվող առանձին հանգամանքներ, որոնք կարող են խոչընդոտել ապաստան ստանալու մասին ժամանակին դիմում ներկայացնելը: Այդ իսկ պատճառով ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է ավելացնել 15-օրյա ժամկետը վերականգնելու հնարավորություն, որպեսզի ապաստան ստանալու մասին դիմումի ներկայացման համար սահմանված նշված 15-օրյա ժամկետի հաշվարկը սկսվի նման խոչընդոտի վերացման պահից:

Առհասարակ, ՄԱԿ ՓԳՀ-ն պաշտպանում է այն դիրքորոշումը, որ ապաստան ստանալու մասին դիմումները պետք է մշակվեն սեղմ ժամկետներում՝

հետևելով հանձնման և միջազգային պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի ուղեցույցին: Հաշվի առնելով ապաստան ստանալու մասին դիմումի և որոշման բողոքարկման համար սահմանված ժամկետների կրճատումը՝ ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է նաև ընդգծել այն հանգամանքը, որ Փախստականների մասին օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները, որոնք վերաբերում են անվճար իրավաբանական օգնության և բանավոր թարգմանության ծառայությունների տրամադրմանը, նույնպես կիրառելի լինեն հանձնման գործընթացի շրջանակներում կալանքի տակ գտնվող և ապաստան ստանալու համար դիմող անհատի պարագայում:

Առաջարկություններ պատժից ազատման սկզբունքի վերաբերյալ

Օգտվելով հնարավորությունից՝ ցանկանում ենք նաև Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ 1951 թվականի Փախստականների մասին կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Պայմանավորվող Պետությունները *«ապօրինի մուտքի կամ ներկայության պատճառով չպետք է պատժի ենթարկեն այն փախստականներին, որոնք, ուղղակիորեն գալով մի տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել Հոդված 1-ի իմաստով, առանց թույլտվության մուտք են գործում կամ գտնվում են այդ Պետությունների տարածքներում, պայմանով, որ նրանք անհապաղ ներկայանան իշխանություններին և իրենց ապօրինի մուտքի կամ ներկայության վերաբերյալ հիմնավոր պատճառներ ներկայացնեն»:*

Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետը լավ է արտացոլված «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետում, որով նախատեսվում է, որ *«ապաստան հայցողները և փախստականները Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար չեն ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության»:* Ավելին, ՀՀ Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանի ապօրինի հատման համար ներկայացվող մեղադրանքի համար նախատեսված է բացառություն այն դեպքերում, *«երբ Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված քաղաքական ապաստանի իրավունքից օգտվելու համար օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն»:*

Այնուամենայնիվ, դեռևս կան մի շարք ապաստան հայցողներ, ովքեր կալանավորվել են և երկար ժամկետով ազատազրկվել Հայաստանի Հանրապետության տարածք ապօրինի մուտք գործելու համար: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար Ձեր ուշադրությունն ենք հրավիրում

ՄԱԿ ՓԳՀ-ի մեկնաբանություններին, որոնք ներկայացված են անգլերեն և հայերեն լեզուներով այստեղ՝

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), «*UNHCR comments on the Draft New Criminal Code of the Republic of Armenia with particular reference to the wording of Article 329(3) of the existing Criminal Code*» (ՀՀ նոր Քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի մեկնաբանություն՝ գործող Քրեական օրենսգրքի 329-ի հոդվածի 3-րդ մասի ձևակերպման առանձնակի մեջբերմամբ), 2016թ. հուլիս, կարելի է գտնել հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/5a69a3304.html>.

52.1 հոդվածի 1-ին մասում 3-րդ կետ ավելացնելու և 57-րդ հոդվածի 1-ին մասում լրամշակում կատարելու վերաբերյալ

ՄԱԿ ՓԳՀ-ն կիսում է այն մտահոգությունը, որը բխում է որոշ անձանց կողմից ապաստան ստանալու ընթացակարգերի չարաշահման փորձերից, որոնք միտված են սահմանված ժամկետներում հանձնման պահանջի վերաբերյալ համապատասխան որոշման կայացման խափանմանը և գիտակցում է ապաստան ստանալու նման խնդրանքների քննության առավել արագ և արդյունավետ գործընթացի կարիքը: Այս առումով, ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է առաջնահերթ համարել ապաստան ստանալու մասին խնդրանքների քննությունը՝ սակայն չսահմանելով համապատասխան ժամկետներ: Միգրացիոն ծառայությունն իր պարտականությունների և գործառույթների ներքո պետք է ապահովի հանձնման գործընթացի շրջանակներում կալանքի տակ գտնվող անձանց գործերի քննությունը՝ ապաստան ստանալու մասին համապատասխան դիմումը ներկայացվելուց կամ համապատասխան պետական մարմինների կողմից այն ուղղորդվելուց անմիջապես հետո: Միաժամանակ, բարդ դեպքերում Միգրացիոն ծառայությունը պետք է ունենա մեկամսյա ժամկետը գերազանցելու որոշակի ճկունություն:

Նույն մոտեցումը պետք է կիրառվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 222.14 հոդվածում առաջարկվող լրամշակումների համատեքստում, որոնցով նախատեսված են ավելի սեղմ ժամկետներ (15 օր)՝ Վարչական դատարանում և Վճռաբեկ դատարանում որոշումները բողոքարկելու համար: Այդուհանդերձ, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից օգտվելու իրավունքի երաշխիքն ապահովելու համար բարդ դեպքերում ողջամիտ է կիրառել առավել ճկուն մոտեցում՝ գերազանցելով 15-օրյա ժամկետը:

ՄԱԿ ՓԳՀ-ի ընկալմամբ՝ բողոքարկման համար սահմանված «10 օր» ժամկետը վերաբերում է աշխատանքային (այլ ոչ թե օրացուցային) օրերին, ուստի, առաջարկում ենք հստակեցնել այս հանգամանքը՝ առավել պարզություն ապահովելու և գործնականում դժվարություններից խուսափելու նպատակով:

Հաշվի առնելով բողոքարկման համար սահմանված սեղմ ժամկետները՝ ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է հստակեցնել, որ ապաստան տրամադրելու մասին որոշումը պետք է տրվի դիմողին և նրա փաստաբանին, ընդ որում՝ դիմողի պարագայում պետք է ապահովվի որոշման ներկայացումը վերջինիս համար հասկանալի լեզվով:

Հետևելով դյուրացված վարույթի վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի Գլխավոր գրասենյակից ստացված ուղեցույցին՝ կից ներկայացվող ձևաթղթում (Հավելված 1) մենք նաև ամփոփել ենք վերոհիշյալ առաջարկությունները և դրանց հիմքում ընկած փաստարկները:

2. Լրամշակումներ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում

Պատշաճ ընթացակարգերը և ընթացակարգային արդարության միջազգայնորեն ընդունված չափանիշները պահանջում են, որ ապաստանի տրամադրման ընթացակարգերի արդարացի գործարկումն ապահովվի բողոքարկման կամ վերանայման մեխանիզմով: Այս առումով, բացասական որոշումը բողոքարկելու ապաստան հայցողի իրավունքը հանդես է գալիս որպես առանցքային երաշխիք, որը կոչված է զերծ պահել Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով նախատեսված նյութական իրավունքների մերժումից: Արդյունավետ իրավական պաշտպանությունից օգտվելու իրավունքը՝ մարդու իրավունքներին առնչվող միջազգային և տարածաշրջանային իրավական նորմերի ընկալմամբ, մասնավորապես՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի դրույթներով, պետք է լինի արդյունավետ ինչպես գործնականում, այնպես էլ ըստ օրենքի՝ ընդունելով երաշխիքի, այլ ոչ թե պարզապես մտադրության կամ գործնական պայմանավորվածության ձև:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածում նաև նշվում է, որ «[յ]ուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է դատական բարեփոխումների համատեքստում ապաստանի գործերի համար ներդնել հատուկ դատական քննության ընթացակարգ կամ ներդնել առանձին թեմաներով զբաղվող կամ մասնագիտացված պալատներ կամ այլ միջոցներ, որոնք թույլ կտան ապահովել դատավորների մասնագիտացումը և ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից թիրախային վերապատրաստման նախաձեռնությունների իրականացումը: Այս մոտեցումն ընդունվել է բազմաթիվ երկրներում (օրինակ՝ Ավստրիայիում, Բելգիայում,

Դանիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում և Միացյալ Թագավորությունում), և ՄԱԿ ՓԳՀ-ն հաճույքով կկիսվի այս ոլորտում իր ունեցած միջազգային փորձով: Ավելին, ներկայիս գործելակերպը վկայում է այն մասին, որ ապաստանի տրամադրման հետ կապված դեպքերը յուրահատուկ են և բարդ, քանի որ դրանց համար պահանջվում են հատուկ փորձ և գիտելիքներ, այդ թվում որոշ բարդ դեպքերում՝ միջազգային կազմակերպությունների փորձագիտական խորհրդատվությունը՝ ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրման, արժանահավատության հատուկ վերլուծության, իսկ որոշ դեպքերում բացառող դրույթների համալիր գնահատման միջոցով:

3. Լրամշակումներ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում

Ներկայիս գործելակերպը վկայում է այն մասին, որ պահանջվում են առավել հստակ իրավական դրույթներ, որոնք կոչված կլինեն երաշխավորելու, որ (i) ապաստանի տրամադրման ընթացակարգը, նախքան ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը, ինքնաբերաբար նախատեսի հանձնման (հանձնում պահանջող երկրին) հրամանագրի կատարման կասեցում, որ (ii) ապաստանի խնդրանքի, ապաստան ստանալու մասին դիմումի և ապաստանի տրամադրման ընթացակարգի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չներկայացվի ծագման երկրին, որ (iii) հստակ նշվի անհապաղ Միգրացիոն ծառայությանը ապաստան ստանալու մասին խնդրանքն արդյունավետ կերպով ուղղորդելու համապատասխան պետական մարմինների պարտավորությունը, որ (iv) արդյունավետ և անվճար իրավաբանական օգնություն և շահերի ներկայացում տրամադրվի, եթե հանձնման շրջանակներում կալանքի տակ գտնվող անձը չունի այն ապահովելու միջոցներ, ինչպես նաև, որ (v) համապատասխան որակավորում ունեցող բանավոր թարգմանչի աջակցությունը ապահովվի հանձնման և ապաստանի տրամադրման ընթացակարգի բոլոր փուլերում՝ նպատակ ունենալով ապահովել տեղեկատվության արդյունավետ հավաքագրումը դիմողի և ապաստան ստանալու նրա դիմումի շրջանակներում արված հայտարարությունների վերաբերյալ: Բացի այդ, եթե կան հիմնավոր պատճառներ կարծելու, որ հանձնման ընթացակարգերում ընդգրկված անձին կարող է սպառնալ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի ենթարկվելու իրական վտանգ (այն է՝ խոշտանգում, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք և (կամ) պատիժ), ապա ծագման երկրում օրենսդրական նորմերի և ընդունված գործելակերպի իրավական վերլուծությունը, այդ թվում՝ տվյալ երկրի դիվանագիտական հավաստիացումների խիստ ուսումնասիրությունը, պետք է իրականացվեն մանրակրկիտ և համալիր եղանակով:

Այս առնչությամբ, ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է դիտարկել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54 և 54¹ գլուխների համալիր վերանայման հնարավորությունը կամ ներառել Փախստականների մասին օրենքում համապատասխան հստակ մեջբերում այն դեպքերում, երբ հանձնման ընթացակարգերում ընդգրկված անձը Հայաստանի Հանրապետությունում դիմում է ապաստան ստանալու համար:

ՄԱԿ ՓԳՀ, 2018թ. հունիս